Պարույր Սևակ (1924-1971)

Քո պատճառով

Քո աչքերի՛, քո աչքերի՛, քո աչքերի՛ պատճառով
Իմ աչքերը ամբո՛ղջ գիշեր, ամբո՛ղջ գիշեր չե՛ն փակվում:
Քո մատների՛, քո մատների՛, քո մատների՛ պատճառով
Իմ մատները, իմ մատները լո՛ւյս են ուզում խմորել:
Քո թևերի՛, բա՛ց թևերի, մե՛րկ թևերի պատճառով
Իմ աչքերին, իմ աչքերին ջրվեժնե՛ր են երևում:
Քո ծիծաղի՛, քո ծիծաղի՛, քո ծիծաղի՛ պատճառով
Իմ ծիծաղը, իմ ծիծաղը պաշտոնաթո՛ղ է դարձել:
Քո քայլվածքի՛, քո քայլվածքի՛, քո քայլվածքի՛ պատճառով
Լսողությամբ սահմանապա՛հ, սահմանապա՛հ եմ դարձել:
Քեզ այս ձևով ունենալու-չունենալու պատճառով
Կորցրել եմ ունեցածս՝ հպարտությո՛ւնս հաղթողի…

Паруйр Севак (1924-1971)

“Из-за тебя”

Из-за твоих, из-за твоих, твоих глаз,
Мои глаза, глаза мои целую ночь не закрывались.
Из-за твоих, из-за твоих, пальцев твоих
Мои пальцы, пальцы мои желают свет лепить.
Из-за твоих, из-за голых рук твоих
Моим глазам, моим глазам водопад мерещится.
Из-за смеха, из-за смеха, из-за смеха твоего
Смех мой, мой смех ушёл в отставку.
Из-за твоей, из-за твоей, из-за походки твоей
По слухам я пограничником, пограничником стал.
Из-за того, что так имея , не имею я тебя
Я потерял , всё что имел: гордость ...победителя.

Դերենիկ Դեմիրճյան (1877-1956)

***

Նրանք հանդիպեցին իրար: Նրանցից մեկը չէր սպասում, որ մյուսը կենդանի է: Լսել էր, որ նրան դժբախտություն է պատահել, որ նա չէր դիմանա այդ դժբախտությանը, կմեռներ:

Եվ ահա, ի՛նչ ուրախալի բան, նա կենդանի՛ է…

Իրար էին նայում և չէին խոսում: Ճիշտը՝ չէին կարողանում խոսել: Խոսքը քիչ եղավ: Չկար այն խոսքը…

Միայն նայում են իրար և…

-Հը՛մ,- ժպտում է սա:

-Հա՛,-ժպտում է մյուսը:

Կրկին նայում են իրար ոտից գլուխ ու էլի…ժպտում:

-Հա՛, հը՛մ…

Է՛հ: Նախամարդի՞կ են, ի՞նչ են, թե՞ ապագայի մարդիկ: Ո՞ւր կորավ լեզուն, հազարավոր տարիների լեզուն… <<Հա՛, հը՛մ>>. սրանով խոսք ու զրույց կլինի՞:

Բայց տե՛ս, եղավ:

Եվ որքա՛ն նրբություններ, խոր մտքեր այս մի <<հը՛մ, հա՛>>-ի մեջ…

Дереник Демирчян (1877-1956)

***

Они встретились. Он не ждал, что она жива. Слышал, что с ней случилась беда, что она якобы не смогла выдержить, что она умерла.

И вот, какая радость, она жива!!!

Смотрят друг на друга…молча. Вправду: не могли говорить. Не хватило слов. Не было этого слова…

Только смотрели друг на друга и…

-Гм,- улыбнулся он.

-Да,- улыбнулась она.

Снова пристальным взглядом посмотрели друг на друга и опять… улыбнулись.

-Да, гм…

Эх! Первобытные люди, что ли? Или люди будущего? Куда делся язык? Язык, на котором говорили тысячи лет…”Да, гм!” Можно ли этим образовать речь и разговор?

Получается- можно!

И сколько тонкости, глубины и мысли в одном “гм, да”…

Սիլվա Կապուտիկյան (1919-2006)

«Որոնում»

Ուզում էի դուրս չգալ այս իրիկուն,
Մնալ մենակ, մնալ իմ մեջ ու ինձ հետ.
Բայց ինքս ինձ նորի՛ց գտա փողոցում,
Նորի՛ց դրսում, նորի՛ց սիրող, նորի՛ց խենթ…
Քե՛զ եմ փնտրում: Թեև չկա՛ս, դու չկա՛ս,
Բայց դո՛ւ ես այս փողոցներով ինձ տանում.
Քեզնո՛վ է լի սիրտ ս, շուրջս ու ճամփաս,
Քեզնո՛վ է լի ամեն հայացք ու անուն:
Մայթին ընկած սլացիկ շուքը ծառի
Կիսալույսում ինձ քո ստվերն է թվում.
Բարձրահասակ մեկը գալիս է հեռվից՝
Ինձ թվում է, թե այդ դո՛ւ ես երևում:
Իմ ետևից քո ոտնաձայնն է ասես,
Ետ եմ դառնում՝ օտար դեմք է նայում ինձ.
Մեկը խոսեց, թվաց քո ձա՛յնն է անտես,
Թվաց դո՛ւ ես ելնում դեմի անկյունից…
Ու փնտրո՛ւմ եմ, ու փնտրո՛ւմ եմ, ու փնտրո՛ւմ,
Փողոցներով ելնում եմ վեր, իջնում ցած,
Ես խենթորեն խմբերի՛ն եմ խառնվում,
Ես կարոտից խեղդվո՛ւմ եմ խենթացած:
Ո՛ւր էլ լինես, ինչքան լինես դու հեռվում,
Հիմա իմ դեմ կհայտնվե՛ս դու սակայն.
Ում որ այսպես որոնո՛ւմ են աշխարհում,
Նա պիտի գա՛ անպայման:

Сильва Капутикян (1919-2006)

“Поиск”

Не хотела выходит этим вечером,
Я желала внутри себя дома быть,
Но вновь оказалась я на улице,
Вновь дорога, вновь я любя, без ума…
Тебя ищу, ищу тебя, а здесь нет.
Тебя нет, но это ты ведешь меня.
Тобой наполнено сердце, дорога моя,
Тобой наполнен каждый взгляд и имя.
Сень дерева в полумраке вечера,
Мигом мне твоей тенью кажется.
Кто-то рослый издали подходит ко мне,

А я думаю, что это ты идешь,
Позади меня слышу я поступь твою,
Повернулась, лицо чужое нашла,
Чужой голос, но твоим он мне кажется,
И как будто из-за угла вышел ты…
И ищу я, ищу тебя, ищу я,
По дороге сверху вниз я протекла
И, безумна, слилась я с этой толпой
И от тоски задыхаюсь. Без ума!
Где бы ты ни был, даже совсем далеко,
Сейчас же передо мной ты явишься:
Кого в мире кто-то ищет сильно так,
Вправду придет, точно-точно, тот придет.

Հովհաննես Գրիգորյան (1945-2013)

ՀԱՅԱՍՏԱՆ
Սա իմ երկիրն է – չափսերով այնպիսին,,
որ կարող եմ վերցնել հետս,
թե մի հեռու տեղ գնամ:
Փոքրիկ՝ ինչպես ծերացած մայր,
փոքրիկ՝ ինչպես նորածին զավակ,
իսկ քարտեզի վրա
ընդամենը արցունքի մի կաթիլ…
Սա իմ երկիրն է – չափսերով այնպիսին,
որ ազատորեն տեղավորել եմ սրտիս մեջ,
որ չկորցնեմ հանկարծ…

Оганнес Григорян (1945-2013)

“Армения”
Эта моя страна,
такого размера,
что могу ее взять с собой,
если соберусь в путь.
Маленькая, как новорожденный,
Маленькая, как старая мать,
А на карте - всего лишь капля слезинки…
Эта моя страна,
что свободно поместилась в сердце,
чтоб вдруг ее не потерять.